# 02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

37 (1436) • 4 հոկտեմբերի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am




## Կրթահամալիրի սաները Սարդարապատում երդվեցին

Հոկտեմբերի 2-ին Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրում տեղի ունեցավ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի, քոլեջի եւ ուսումնական կենտրոնի առաջին կուրսեցիների երդման հանդիսավոր արարողությունը, որին մասնակցում էր ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսյանը:



Բարձրաստիճան սպաներն ու պաշտոնյաները նախ ծաղիկներ խոնարհեցին Արցախյան ազատամարտում զոհված մարտիկների եւ Հայաստանի Առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի հուշարձաններին, ապա սկսվեց երդման արարողությունը:

Ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսյանի, Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթեւոսյանի, Արմավիրի քաղաքապետ Դավիթ Խուդաթյանի, ոստիկանության պետի տեղակալ Վարդան Մովսիսյանի եւ կրթահամալիրի պետ Մուշեղ Բաբայանի ներկայությամբ շուրջ 100 սովորողներ երդվեցին:

Շնորհավորական ելույթ ունեցավ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսյանը, որը ապագա ոստիկաններին հորդորեց լավ սովորել եւ մաղթեց բարի երթ ոստիկանական մեծ ընտանիք. «Առաջնային, ձեզ համար որպես ամենակարեւոր, անկյունաքարային սկզբունք դարձրեք՝ գիտելիքն ու մարդկային որակը: Երբ ստանում են սպայական առաջին ուսադիրները, այդ կապակցությամբ շնորհավորական ուղերձում մեջբերում է արված Թումանյանի հանճարեղ խոսքերից, որ ամենամեծ կոչումը մարդ կոչումն է: Որպես կանոն, պրոֆեսիոնալները նաեւ լավ մարդիկ են: Այս երկուսի համադրությունը ստեղծելու է հրաշալի ոստիկանություն»:

Երդման հանդիսավոր արարողությունն ավարտվեց կրթահամալիրի սովորողների հանդիսավոր երթով ու ոստիկանության զորքերի պատվո պահակախմբի ցուցադրական ելույթով:

Միջոցառման ավարտին Արման Սարգսյանը հանդիպեց ոստիկանության կրթահամալիրի սովորողների ծնողներին ու հարազատներին, շնորհավորեց նրանց, խնդրեց որ հետեւեն իրենց զավակների ուսումնառությանը՝ վստահեցնելով, որ ապագան հենց գիտելիքով զինված ոստիկանինն է:

## Հափշտակել էին 101 միլիոնից ավելի դրամ

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչությունում խարդախությունների վերաբերյալ օպերատիվ տվյալներ էին ստացվել: Տեղեկությունների հիման վրա ձեռնարկվեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, սկսվեց նյութերի նախապատրաստման գործընթաց:



Ոստիկանության ծառայողները փաստական տվյալներ ձեռք բերեցին, որ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող դատապարտյալներից մեկը սոցիալական ցանցով ծանոթացել է մի կնոջ հետ: Ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների՝ նրանք համաձայնության են եկել եւ մի տղամարդու անվամբ հիմնել են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ու ծավալել անշարժ գույքի առուվաճառքի գործակալության թվացյալ գործունեություն: Մասնավորապես, կինը քաղաքացիներին ներկայացել է որպես հիշյալ գործակալության տնօրեն եւ շահավետ տարբերակներով անշարժ գույք ձեռք բերելու պատրվակով նրանց հետ ձեւական պայմանագրեր կնքել: Այս կերպ չարաշահելով նրանց վստահությունը՝ 2018-2019 թթ. ընթացքում խարդախությամբ քսաներեք քաղաքացուց ստացել ու հափշտակել են առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 101 միլիոն 372 հազար դրամ:

Ոստիկանությունում քրեական գործ է հարուցվել, որն ուղարկվել է քննչական կոմիտե:

## Դանակահարություն մահվան ելքով



Սեպտեմբերի 29-ին, կեսգիշերին մոտ, 1-02 ահազանգած կինը հայտնեց, որ Ռուբինյանց փողոցում ամուսնուն դանակահարել են: Ահազանգը փոխանցվեց ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին: Րոպեների տարբերությամբ բաժնում եւս մեկ ահազանգ հնչեց՝ հիվանդանոցից հայտում էին, որ Ռուբինյանց 19 շենքից դանակահարված վիճակում հոսպիտալացվել է մի տղամարդ, որը բուժհաստատություն տեղափոխվելուց ժամեր անց մահացավ:

Ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի քրեական հետախույզները, ծավալուն օպերատիվ միջոցառումների արդյունքում, փաստական տվյալներ ձեռք բերեցին, որ Ռուբինյանց փողոցի բնակիչ, 30-ամյա մի տղամարդ տնից դուրս է կանչել 49-ամյա տղամարդուն: Արդեն շենքի բակում մեկ-երկու բառ փոխանակելուց հետո դանակահարել էր նրան:

Լույսը չբացված՝ Զեյթունի ոստիկանները կասկածյալին հայտնաբերեցին ու բերման ենթարկեցին բաժին: Նա ներկայացվել է տարածքային նախաքննական մարմնին ու կալանավորվել:

Դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել:

Հանգամանքները պարզվում են:

## Ոստիկանները բացահայտել են ապօրինություններ



ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության մասնագետների կողմից Ջերմուկի համայնքապետարանում իրականացված ուսումնասիրության նյութերի հաշվետվության հիման վրա ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման եւ Վայոց ձորի մարզային վարչությունների ու Ջերմուկի բաժնի ծառայողների համատեղ միջոցառումների արդյունքում նախապատրաստված նյութերով պարզվել են Ջերմուկ համայնքի ղեկավարի ապօրինությունները:

էջ 2

## Հակակոռուպցիոն մեխանիզմներ



Կոռուպցիոն դրսեւորումները սահմանափակելու նպատակով միջազգային հանրությունը ժամանակի ընթացքում ձեւավորել է դրա դեմ պայքարի բազմաթիվ մեթոդներ ու ձեւեր: Գործնականում կոռուպցիայի դեմ պայքարում այդ բոլոր մոտեցումները համակիրառվում են:

Ժողովրդավարական պետություններում այս երեւույթի դեմ պայքարի շրջանակներում մշակվում են ինչպես կանխարգելիչ բնույթի միջոցառումներ, այնպես էլ քրեաիրավական համապատասխան միջոցների ծրագիր, որն ուղղված է օրենքը խախտող անձանց պատասխանատվության ենթարկելուն:

Ցանկացած երկրում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու արդյունավետ միջոցներից են պետական պաշտոնյաների գործունեության հրապարակայնությունը, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների կողմից կարգապահական եւ էթիկական նորմերի հսկողությամբ իրենց պարտականությունները բարեխիղճ կատարելը:

էջ 2

## Զենք ու զինամթերք՝ տնօրենի պահարանում



Խուլիգանության հատկանիշներով հարուցված քրեական գործի շրջանակներում, հոկտեմբերի 1-ին ոստիկանության Մուշի բաժնի քրեական հետախույզները կատարել են խուզարկություն Արթիկ քաղաքի Շահումյան փողոցի հանդիսությունների սրահում: Տնօրենի աշխատասենյակի չհրկիզվող պահարանից հայտնաբերվել են «ՍԱՅԳԱ-12C» տիպի ծալովի խզակոթով որսորդական հրացան, փամփշտատուփ ու տարբեր տրամաչափի փամփուշտներ:

Կատարվում է նախաքննություն:

### Վեճն ավարտվեց դանակահարությամբ



*Գումարային հարցերի շուրջ վեճի ժամանակ տուժողին դանակահարել էր 22-ամյա մի երիտասարդ:*

էջ 2

### Առանց վաղեմության ժամկետի



*Իրավապահները պարզեցին գողությունը կատարած անձանց ինքնությունը, բայց նրանց հայտնաբերել չհաջողվեց:*

էջ 3

### Հանցանք եւ բռնություն



*Ըստ վիճակագրության՝ ամեն տարի աշխարհում ավելի քան մեկուկես միլիոն մարդ բռնի մահվան զոհ է դառնում:*

էջ 6

**ՀՀ ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մշտական մրցութային հանձնաժողովը հայտարարում է մրցույթ՝ ՀՀ ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայության հետեւյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու մասին**

# Հակակոռուպցիոն մեխանիզմներ

Սկիզբը՝ էջ 1

Բազմաթիվ երկրներում հատուկ օրենքներ են ընդունվում, որոնք պաշտոնյաների վարքագծի կամ էթիկական նորմերի յուրօրինակ կոդեքսներ են: Շատ երկրների օրենսդրություններն արգելում են պաշտոնյաներին զբաղվել վճարովի այլ գործունեությամբ, որոշակի խմբի պաշտոնյաների՝ անդամակցել քաղաքական կազմակերպություններին, ծառայողական տեղեկատվությունը սեփական շահերի համար օգտագործել, տարբեր անձանցից նվերներ եւ ընծաներ ստանալ, պաշտոնյան իրավունք չունի նաեւ ֆինանսական հետաքրքրություններ ունենալ այն ընկերություններում, որոնց հետ առնչվում է՝ ծառայությունից ելնելով: Որոշ երկրների քրեական օրենսգրքերում կաշառակերության հոդվածները տարածվում են բոլոր անձանց, այլ ոչ միայն պետական պաշտոններ զբաղեցնողների վրա:

Եվրոպական բոլոր երկրների օրենսդրությունները կոռուպցիոն բնույթի տարբեր դրսեւորումները դիտում են որպես քրեորեն պատժելի արարք:

Մեծ Բրիտանիայում ծառայողների համար գործում է վարքագծի հատուկ կանոնակարգ, որի համապատասխան բաժնում հստակ կանոնակարգված են պետական ծառայողների եւ մասնավոր սեկտորի հարաբերությունները. նշված է մասնավոր ընկերությունների հետ պետական պայմանագրեր կնքելու արարողակարգը, այդ ընթացքում պաշտոնյա-



ների համապատասխան վարքագիծը: Բացի այդ, ընկերության հետ պայմանագրեր կնքող ծառայողին արգելվում է արտոնյալ պայմաններով նշված ընկերությունից ապրանք ձեռք բերել կամ որոշակի ծառայություններից օգտվել, մասնակցել ոչ պաշտոնական «հյուրասիրությունների»:

Մեծ Բրիտանիայում ընդունված կանոնների համաձայն՝ պաշտոնյան կամ ծառայողը պետք է հրաժարվի բոլոր այն նվերներից, որոնց տրամադրումը այս կամ այն կերպ առնչվում է նրանց ծառայողական պարտականությունները կատարելուն: Բացառություն կարող են կազմել Սուրբ Ծննդյան առիթով ստացված նվերները, եթե, ասենք, օրացույցներ են, թղթապանակներ կամ գրասենյակային այլ մատչելի ապրանքներ, որոնց վրա առկա են նվիրող ընկերությունների տարբերանշանները. այդ դեպքում նվերն ավելի շուտ դիտվում է որպես գովազդային նյութ:

Աշխարհում ընդունված կարգ է, որ պետպաշտոնյան թոշակավորվելուց հետո աշխատանքի է անցնում մասնավոր կամ պետական բաժնեմասով ընկերություններում: Պարզվում է՝ անմեղ թվացող այս «ավանդույթը» եւս կարող է կոռուպցիոն ռիսկեր պարունակել: Պաշտոնյան իր ապագա աշխատատեղն ապահովելու համար հնարավոր է, որ պաշտոնավարման տարիներին տվյալ ընկերությանը որոշակի «ծառայություններ մատուցի»: Այս կարգի երեւույթները բացառելու համար Ֆրանսիայի կառավարությունը 1995 թվականին որոշում է կայացրել ստեղծել պետական ծառայողների վարքագծի, պարտքի եւ արժանապատվության հարցերով զբաղվող հանձնաժողով, որը կոչված է գնահատելու պաշտոնյայի ապագա աշխատանքի եւ նրա ծառայողական գործունեության համատեղելիության հարցը:

*Շարունակելի*

# Ոստիկանները բացահայտել են ապօրինություններ

Սկիզբը՝ էջ 1

Չարաշահելով պաշտոնեական լիազորությունները եւ դրանք օգտագործելով համայնքի եւ պետության օրինական շահերին հակառակ՝ համայնքի ղեկավարը 2006 թվականին կազմել է պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող կեղծ տեղեկանք՝ իբր Ձերմուկ համայնքի վարչական սահմաններում գտնվող նախկին օդանավակայանի տարածքն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի կազմում: Դրա հիման վրա ստանալով համայնքի ավագանու համաձայնությունը՝ 60 հա մակերեսով նշված հողատարածքը ներկայացրել է աճուրդի, ինչից հետո չարամտորեն խախտելով հրապարակային սակարկությունների կարգը եւ ձեւական աճուրդ կազմա-



կերպելով՝ ՀՀ ԱԺ նախկին պատգամավորի որդուն օտարել է 486 միլիոն դրամ կադաստրային արժեքի 30 տոկոսով՝ 153 միլիոն 300 հազար դրամով:

Բացի այդ, նախապատրաստված նյութերով պարզվել է նաեւ, որ 2018-2019 թվականներին Ջերմուկի համայնքապետարանի պաշտոնատար անձանց կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունքի հետեւանքով, իրենց պարտականությունները չկատարելու պայմաններում, օգտվելով տեխնիկական հսկողություն իրականացնող ՍՊ ընկերության տնօրինության անգործությունից, Ջերմուկ համայնքի Հեր-Հեր գյուղի փողոցային լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներն իրականացնող ՍՊ ընկերության տնօրինությունը նախագծով եւ նախահաշվածավալաթերթով նախատեսված աշխատանքները կատարել է մասնակի եւ կազմելով իրականությանը չհամապատասխանող կեղծ կատարողական ակտեր՝ համայնքի ֆինանսական միջոցներից խարդախությամբ հափշտակել է խոշոր չափի՝ 1 միլիոն 450 հազար դրամ:

Նախապատրաստված նյութերի հիման վրա հարուցվել է քրեական գործ: Կատարվում է նախաքննություն:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ

# Վեճն ավարտվեց դանակահարությամբ

Սեպտեմբերի 30-ին, կեսգիշերն անց, ոստիկանության Շենգավիթի բաժնում բժշկական կենտրոնից հաղորդում ստացվեց, որ կրծքավանդակի կտրած-ծակած վերքով բուժօգնության է տեղափոխվել 24-ամյա մի երիտասարդ:



Օպերատիվ խումբը մեկնեց հիվանդանոց: Դանակահարվածը ի վիճակի չէր բացատրություն տալու:

Հետաքննություն իրականացնող մարմինը բացահայտման ուղղությամբ տարաբնույթ միջոցառումներ ձեռնարկեց, որոնց արդյունքում պարզվեցին ոչ միայն էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, այլեւ ենթադրյալ հանցագործություն կատարած անձի ինքնությունը:

Ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզները, համագործակցելով ոստիկանության այլ ստորաբաժանումների ծառայողների հետ, ըստ քննությամբ ձեռք բերված նախնական տվյալների, պարզեցին, որ Մելիք Ադամյան փողոցի մերձակա զբոսայգում, գումարային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ, տուժողին դանակահարել է Այգեստանի 9-րդ փողոցի 22-ամյա մի բնակիչ:

Նույն օրը իրավապահները Խորենացու փողոցում հայտնաբերեցին կասկածվողին եւ բերման ենթարկեցին ոստիկանության Շենգավիթի բաժին:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Գոռ ՎԱՆՅԱՆ

# Չարբախի ոստիկանների բացահայտումը



Հոկպեմբերի 1-ին ոստիկանության Շենգավիթի բաժնի Չարբախի բաժանմունքում տեղեկություններ սպացվեցին, որ Հալաբյան փողոցի 51-ամյա մի բնակիչ վարչական փարածքում գողություններ է անում:

Քրեական հեփախույզները օպերափիվ փվյալներն իրացնելով՝ Շարուրի փողոցից կասկածվողին բերման ենթարկեցին: Նա խոսփովանեց, որ սեպփեմբեր ամսին, փարբեր օրերի, գողացել է Շիրակի եւ Հովհաննիսյան փողոցներում կայանված «ՎԱԶ-2107» մակնիշի երկու մեքենայի մարփկոցները:

Գողության դեպքերով նախապափրասփվում են նյութեր:

# www.police.am

## Գողության դեպքեր են բացահայտվել

Սեպտեմբերի 22-ին ոստիկանության Թալինի բաժնի ծառայողները, բջջային օպերատորներից մեկի կայանից գողության փորձ կատարելու կասկածանքով, բաժին բերման են ենթարկել երեք տղամարդու: Նրանք տվել են խոստովանական բացատրություն:

Ոստիկանության ծառայողները պարզեցին, որ բերման ենթարկվածները, նախնական համաձայնության գալով, Արագածոտնի մարզի բջջային երեք օպերատորների կայանների դռները տեխնիկական միջոցներով բացել են ու գողացել մոտ մեկ տոննա վառելիք: Ըստ քննությանը հայտնի տվյալների՝ փորձել են գողություն անել նաեւ բջջային օպերատորներից մեկի՝ Երեւան-Սեւան ճանապարհին գտնվող կայանից, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներում գողությունն ավարտին չեն հասցրել:

Կատարվում է նախաքննություն:

## Շենգավիթի ոստիկանները գողության դեպքեր են բացահայտել

Ոստիկանության Շենգավիթի բաժնում տեղեկություններ էին ստացվել, որ Ներքին Շենգավիթի 11-րդ փողոցի 29-ամյա մի բնակիչ վարչական տարածքում գողություններ է անում: Ձեռք բերված տեղեկությունների իսկությունը ստուգելուց հետո սեպտեմբերի 27-ին, քրեական հետախույզները օպերատիվ տվյալներն իրացնելով, Ներքին Շենգավիթի 11-րդ փողոցի մի բնակարանից կասկածվողին բերման ենթարկեցին: Նա խոստովանեց, որ գողացել է Եղիշե Թադեւոսյան փողոցում կայանված «ՎԱԶ-2106» մակնիշի մեքենայի մարտկոցը:

Հետագա միջոցառումներով պարզվեց, որ կասկածվողը մեկ ամիս առաջ, օգտվելով Ներքին Շենգավիթի 11-րդ փողոցի արհեստանոցի դուռը բաց լինելու հանգամանքից, փող էր գողացել:

Նախապատրաստվում են նյութեր:

## Բնակարանային գողությունը բացահայտվեց

Հուլիսի 31-ին ոստիկանություն էր զանգել մայրաքաղաքի Ավանեսովի փողոցի 69-ամյա մի բնակիչ եւ հայտնել, որ տեխնիկական միջոցների գործադրմամբ պատուհանի ցանցը կտրելու միջոցով իր տնից գողացել են 320 հազար դրամ եւ դրամապանակ:

Էրեբունու քրեական հետախույզները, իրացնելով օպերատիվ տվյալները, ոստիկանության Երեւան քաղաքի վարչության գործընկերների հետ պարզել են, որ գողությունը կատարել է մեկ այլ բնակարանային գողության համար բերման ենթարկված 25-ամյա երիտասարդը:

Կատարվում է քննություն:

## Պատանին հայտնաբերվեց

Ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում էր ստացվել, որ Փափազյան փողոցի մթերային խանութից գողացել են փող:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ գողությունը կատարել է 16-ամյա մի պատանի: Նա կասկածանքով բերման ենթարկվեց ոստիկանություն, ապա ներկայացվեց քննչական բաժին:

Պատանին խոստովանական բացատրություն է տվել, որ սեպտեմբերին Հաղթանակի թաղամասի մի թոնրատնից եւս փող է գողացել: Հետագա միջոցառումներով պարզվել է, որ նա Շերամի փողոցի առեւտրի կետի պատուհանի փականը կոտրել եւ փող ու բջջային հեռախոս էր գողացել:

Կատարվում է քննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Առանց վաղեմության ժամկետի

*Ոստիկանությունն ունի մի քանի խիստ առանցքային գործառույթ, որոնց վրա հիմնվում է հանցավորության դեմ արդյունավետ պայքարի համակարգը: Դրանց հետեւողական ու լիարժեք իրացումն է առարկայական դարձնում պատժի անխուսափելիություն գաղափարը: Հետախուզվողների հայտնաբերումն այդ գործառույթներից մեկն է: Յուրաքանչյուր հետախուզվողի հայտնաբերումով ոստիկանությունն, ըստ էության, վկայում է, որ չկան չբացահայտվող հանցագործություններ, որ թյուր է այն մտայնությունը, թե հանցանքի պահին չբռնվելով՝ հնարավոր է մնալ անպատիժ:*



Վերջին շրջանում ոստիկանության տարբեր ստորաբաժանումների կողմից տասնյակ հետախուզվողներ են հայտնաբերվել: Անդրադառնանք մի քանի դեպքերի:

Լոռու մարզի 27-ամյա բնակիչ Հարություն Վ.-ն իրավապահների կողմից հետախուզվում էր խարդախության համար: Մի շարք քաղաքացիների վստահությունը չարաշահելով՝ առանձնապես խոշոր չափերի գումարներ էր հափշտակել ու լքել հանրապետության տարածքը: Փախուստը փրկություն չէր. օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ոստիկանները պարզեցին նրա գտնվելու վայրը, իսկ ռուս գործընկերների հետ համագործակցության արդյունքում նա հայտնաբերվեց ու տեղափոխվեց Հայաստան: Օպերատիվ աշխատակիցների ձեռք բերած անառարկելի փաստերի ճնշման տակ ստիպված էր խոստովանել կատարած եւս մի խարդախություն. մի անհատ ձեռներեցից խաբեությամբ 500 հազար դրամ էր հափշտակել: Իրավապահները կասկածներ ունեն, որ նրա գործողություններից տուժածներ էլի կան:

Հաջող ավարտ ունեցավ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության եւ մի շարք ստորաբաժանումների աշխատակիցների համատեղ միջոցառումը: Գլխավոր վարչություն բերման ենթարկված 47-ամյա Մեխակ Ե.-ն, հանդիսանալով ՍՊԸ տնօրեն, խուսափել էր պետության նկատմամբ ունեցած հարկային պարտավորություններից, մասնավորապես, վճարունակ լինելով հանդերձ, չէր կատարել մոտ չորսուկես միլիոն դրամ հարկային պարտավորությունը, դիտավորյա՛լ չէր կատարել՝ շահույթ ստանալու նպատակով: Դա հիմք էր հանդիսացել, որ դատարանը ՍՊ ընկերությունը սնանկ ճանաչի: Քրեական պատասխանատվությունից խուսափող Մեխակ Ե.-ին հայտնաբերելու ուղղությամբ հետախուզում էր հայտարարվել: Ձեռնարկված որոնողական միջոցառումները արդյունք տվեցին ամիսներ անց. հայտնաբերվեց Բագրատաշենի սահմանային անցակետում:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել էր նաեւ, որ նա ՍՊԸ-ի հիմնադիրն է, իսկ սնանկ ճանաչվելուց հետո շարունակել էր ընկերության գործունեությունը:

Ապրիլի 22-ին ոստիկանության Կապանի բաժնում հաղորդում ստացվեց: Գողություն էր կատարվել: Թիրախը քաղաքի մթերային խանութներից մեկն էր: Ջարդել էին մուտքի դռան կողպեքն ու ներս խուժել: Գողացել էին ավելի քան մեկ միլիոն դրամի մթերք, տնտեսական ապրանքներ եւ փող:

Հաղորդումն ստանալուն պես ոստիկանները միջոցառումներ ձեռնարկեցին կատարվածը թարմ հետքերով բացահայտելու ուղղությամբ: Իրականացվեցին անհետաձգելի օպերատիվ-հետախուզական եւ քննչական համալիր գործողություններ: Ականատես ու վկա հայտնաբերելու նպատակով անցկացվեցին համապատասխան միջոցառումներ: Ցանկալի արդյունքը երկար սպասել չտվեց: Իրավապահներին հաջողվեց կարճ ժամանակում պարզել գողությունը կատարած անձանց ինքնությունը, նրանց հայտնաբերել, սակայն, չհաջողվեց:

Արարատ մարզի բնակիչներ Սեւակ Ն.-ի եւ Ռուդիկ Բ.-ի, ինչպես եւ գողոնի գտնվելու վայրը անհայտ էր: Նրանք ներգրավվեցին որպես մեղադրյալ՝ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերի հատկանիշներով: Նրանց նկատմամբ հայտարարվեց հետախուզում: Շուտով նրանց գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկություններ ստացան ոստիկանության Մալաթիայի բաժնի ծառայողները. հետախուզվողներն ապաստան էին գտել մայրաքաղաքում:

Կասկածյալներն անմիջապես օպերատիվ տեսադաշտ վերցվեցին: Կազմվեց բերման ենթարկելու գործողությունների համալիր ծրագիր, ուսումնասիրվեցին նրանց հնարավոր երթուղիները: Ի վերջո, հայտնաբերվեցին եւ բերման ենթարկվեցին Արշակունյաց պողոտայից:

Ու կրկին հաստատվեց անառարկելի ճշմարտությունը, որի հետ պետք է հաշվի նստեն բոլորը. ոստիկանությունը գիտի իր գործը, եւ օրենքը ոտնձգողը դատապարտվա՛ծ է պատասխանատվության:

**Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

# www.police.am

## Գողության մեջ կասկածվողը կին էր

Սեպտեմբերի 26-ին ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողները, գողություն կատարելու կասկածանքով, Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի սուպերմարկետի մոտից բերման են ենթարկել Մասիսի 63-ամյա մի բնակչուհու: Նա տվել է խոստովանական բացատրություն, որ նշված խանութի սրահից գողացել է սննդամթերք եւ տնտեսական ապրանք:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է նաեւ, որ նա սեպտեմբերի 23-ին նույն խանութից նույն եղանակով դարձյալ հափշտակել էր սննդամթերք եւ տնտեսական ապրանք:

Գողոնն առգրավվել է:

Նախապատրաստվում են նյութեր:

## Միջադեպ Մոսկովյան փողոցում

Սեպտեմբերի 25-ին ոստիկանության Կենտրոնական բաժին մի քաղաքացուց ահազանգ է ստացվել, որ Օպերայի մոտ տաքսի ծառայության վարորդը զենք է պահել իր վրա: Այնուհետեւ քաղաքացուհին մոտեցել է Թումանյան փողոցում ծառայություն իրականացնող ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի 1-ին գումարտակի ծառայողներին եւ հայտնել, որ «ԲՄՎ»-ի վարորդը զենք է պահել իր վրա:

Ոստիկանության Կենտրոնական բաժնում քաղաքացուհին հաղորդում է տվել, որ Մոսկովյան փողոցում հիշյալ վարորդը, վիճաբանության ժամանակ, զենքով սպառնացել է իրեն եւ ոտքով խփել իր ոտքին:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում ոստիկանություն է ներկայացել Երեւանի 28-ամյա մի բնակիչ՝ ներկայացնելով «Կոլտ» 9 մմ տ/մ գազային ատրճանակ:

Նախապատրաստվում են նյութեր:

## Հայտնաբերվել է 2 կիլոգրամ 900 գրամ թմրամիջոց

Ոստիկանության Թումանյանի բաժնի քրեական հետախույզները հարուցված քրեական գործի շրջանակներում խուզարկություն են կատարել Օձուն գյուղի մի բնակչի տանն ու հարակից շինություններում:

Խուզարկության ընթացքում տղամարդը ոստիկաններին է ներկայացրել 2 կիլոգրամ 900 գրամ կանեփանման զանգված, որն առգրավվել եւ ուղարկվել է փորձաքննության:

Տղամարդը ներկայացվել է նախաքննական մարմնին:

Կատարվում է քննություն:

## Մեքենան առեւանգողը որդին էր

Սեպտեմբերի 28-ի լուսադեմին ոստիկանության Կոտայքի բաժնում մի քաղաքացի հաղորդում էր տվել, որ առեւանգել են բակում կայանված իր «Ռենո» մակնիշի ավտոմեքենան, այնուհետեւ փախցրած մեքենան Աբովյան քաղաքի Հանրապետության փողոցում բախվել է «Օպել»-ի:

Քրեական հետախույզների եւ ՊՊԾ ծառայողների ձեռնարկած միջոցառումներով պարզվել է, որ առանց հորը տեղեկացնելու՝ ավտոմեքենան վարել էր մեքենայատիրոջ 17-ամյա որդին:

Պատանին ներկայացել է բաժին եւ տվել խոստովանական բացատրություն:

Նախապատրաստվում են նյութեր:

# Գողություններ ու գողության փորձեր



Ոստիկանության Նաիրիի բաժնի քրեական հետախույզները, օպերատիվ տվյալներն իրացնելով, բերման են ենթարկել երեք երիտասարդի: Հետախուզական միջոցառումների արդյունքում ոստիկանության ծառայողները փաստական տվյալներ էին ձեռք բերել, որ նրանք գողություններ ու գողության փորձեր են արել: Բաժնի հետաքննության բաժանմունքում սկսվեց նյութերի նախապատրաստման գործընթաց, որի շրջանակներում երիտասարդների մասնակցությամբ կատարվեցին դեպքի վայրի զննություններ: Նախնական տվյալներով՝ երիտասարդները գողություններ էին արել Կոտայքի, Արմավիրի, Երեւանի ավտոլվացման կետերից՝ գաղտնի հափշտակելով փող:

Գողություն էին արել նաեւ խանութներից՝ դարձյալ հափշտակելով փող:

Ըստ քննությանն այս պահին հայտնի տվյալների՝ նրանք արել են քանից ավելի գողություն ու գողության փորձ:

Քննությունը շարունակվում է:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# Ոստիկանները բացահայտեցին դանակահարությունը



*Սեպտեմբերի 24-ի գիշերը հիվանդանոցից ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում էր ստացվել, որ պոչուկի եւ բազկի կտրած-ծակած վերքերով իրենց մոտ է տեղափոխվել 24-ամյա մի երիտասարդ: Նրան դանակահարել էին:*

*Հետաքննություն իրականացնող մարմինը բացահայտման ուղղությամբ տարաբնույթ միջոցառումներ ձեռնարկեց՝ հիվանդանոցում համապատասխան արձանագրություններ կազմելուց մինչեւ օպերատիվ հարցումներ: Հետեւողական աշխատանքի արդյունքում հաղորդումից մեկ օր անց պարզվեց կասկածվողի ինքնությունը:*

*Քրեական հետախույզները տեղեկություններ ստացան, որ Արաբկիրի 37-րդ փողոցում, անձնական հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ, տուժողին մարմնական վնասվածք էր պատճառել Գեղարքունիքի մարզի 23-ամյա մի բնակիչ:*

*Սեպտեմբերի 25-ին ոստիկանության Վարդենիսի բաժնի ծառայողների հետ համատեղ միջոցառումներով կասկածվողը Գավառի Սայադյան փողոցում հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանության Արաբկիրի բաժին:*

*Նա տվել է խոստովանական բացատրություն:*

*Կատարվում է քննություն:*

# Դանակահարություն՝ անհերթ առիթով



Սեպտեմբերի 17-ին, ժամը 20-ի սահմաններում, ոստիկանության Շենգավիթի բաժնում հիվանդանոցից հաղորդում ստացվեց, որ ազդրի ծակած վերքով իրենց մոտ բուժօգնության է դիմել 31-ամյա մի տղամարդ: Նրան դանակահարել էին:

Օպերատիվ խումբը մեկնեց հիվանդանոց: Դեպքը կատարվել էր Պատկանյան փողոցում: Տուժողը չէր ճանաչում իրեն մարմնական վնասվածք պատճառողին. փողոցում մի ծուռ հայացքից, թե փուչ խոսքից վեճի էր բռնվել անցորդի հետ, նա էլ դանակահարել էր:

Քրեական հետախույզների օպերատիվ գործողությունների շնորհիվ հաղորդումից րոպեներ անց տեղեկություններ ստացվեցին, որ հանցագործությունը հնարավոր է կատարած լինի Ներքին Շենգավիթի 19-ամյա մի բնակիչ: Նա բերման ենթարկվեց ոստիկանության Շենգավիթի բաժին եւ խոստովանեց կատարածը:

Կատարվում է քննություն:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# «Սիրային» պատմություն



Օգոստոսի 23-ին Շիրակի մարզի Պեմզաշեն գյուղի բնակիչ Անդրանիկ Մինասյանը ձնոտի կոտրածքով բուժօգնության դիմեց հիվանդանոց: Իրավապահներին հայտնեց, որ վնասվածքը ստացել էր ցանկապատը նորոգելիս: Ըստ նրա՝ մուրճով խփել էր մետաղաձողին, ձայնից ցանկապատին կապված հորթը խրտնել էր, իսկ ինքն ընկնելով՝ վնասվածք էր ստացել:

Անդրանիկի «պատմվածքը», սակայն, իրավապահներին կասկածելի թվաց:

Նյութերի նախապատրաստման ընթացքում ոստիկանության Արթիկի բաժնի աշխատակիցները ձեռնարկեցին համապատասխան միջոցառումներ եւ պարզեցին կատարվածի մանրամասները:

Օգոստոսի 18-ին Տուֆավան գյուղի բնակիչ Մայիս Մխիթարյանը տեղեկանալով, որ Անդրանիկը իր ընկերուհու մասին հետաքրքրվել է, զանգեց նրան եւ պայմանավորվեցին հանդիպել: Հանդիպմանը Մայիսը մենակ չէր եկել. նրան ուղեկցում էին եղբայրը եւ հորեղբոր որդին: Մայիսը զգուշացրեց Անդրանիկին, որ այսուհետ իր ընկերուհու անունն անգամ մտքում չտա: Սակայն Անդրանիկը պատասխանեց, որ եթե նպատակահարմար գտնի՝ կշարունակի հետաքրքրվել:

«Ռոմեոների» վեճը դարձավ անխուսափելի. Մայիսը հարվածներ տեղաց Անդրանիկի դեմքին: Ու միայն ներկաների միջամտությամբ վեճը դադարեց, եւ «հանդիպումն» ավարտվեց:

Անդրանիկի ձնոտի շրջանում ցավերը գնալով սաստկացան: Ստիպված դիմեց բուժօգնության: Ըստ դատաբժշկական փորձաքննության եզրակացության՝ նրան պատճառվել էր միջին ծանրության վնաս՝ առողջության տեւական քայքայումով:

Մայիս Մխիթարյանը կատարել էր արարք՝ քրեական օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասով: Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

# «Ընկերական» հարված



Ամիսներ առաջ ոստիկանության Գավառի բաժնում բժշկական կենտրոնից հաղորդում էր ստացվել, որ մարմնական վնասվածքներով բուժօգնության է դիմել Սարուխան գյուղի բնակիչ Հայկ Մանուչարյանը: Նրա ասելով՝ իրենց բակում պատահաբար նստել էր մեխի վրա:

Իրավապահների ձեռնարկած օպերատիվ միջոցառումների արդյունքում, սակայն, պարզվեց եղելությունը:

Ընկերոջ՝ Վարդանի հետ զրուցում ու կատակում էին: Ժամանցը ջերմ մթնոլորտում էր անցնում: Բայց Հայկը իբր կատակով հայհոյեց Վարդանին: Նա էլ զայրանալով՝ զգուշացրեց, որ իրեն կարգի հրավիրի ու գրպանից հանեց ծալովի դանակը: Հայկը, սակայն, նույն ոգով կատակը շարունակեց, ինչն ավելի զայրացրեց Վարդանին, եւ նա դանակով խփեց ընկերոջ ազդրին:

Ըստ դատաբժշկական փորձաքննության եզրակացության՝ Հայկ Մանուչարյանին պատճառվել էր թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով:

Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

**Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ**

# Հասարակություն եւ ոստիկանություն. համատեղ պայքար



Իշխանությունների, մասնավորապես՝ ոստիկանության եւ բնակչության փոխհարաբերությունների խնդիրը բազմադարյա եւ համաշխարհային հիմնահարց է: Այդ փոխհարաբերությունների կարեւորությունը հատկապես օրակարգային դարձավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ ողջ աշխարհում նկատվեց հանցագործությունների աճ, ինչն էլ իր հերթին ծնեց «վախ հանցավորության հանդեպ» եւ «բարոյական խուճապ»:

Ներկայումս զարգացած արեւմտյան երկրներում, նաեւ՝ մեզ մոտ, նորանոր ուղիներ ու միջոցներ են փնտրում ամրապնդելու հասարակության եւ ոստիկանության փոխհարաբերությունները, ինչի գերնպատակը բնակչության եւ ոստիկանության գործընկերության ամրապնդումն է, որն էլ իր հերթին կապահովի քաղաքացիների անվտանգությունը, իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունը, ինչպես եւ նվազագույնի կհասցնի իրավապահ մարմինների հնարավոր անօրինականությունները: Շատ երկրներում ակտիվ զարգանում է Community policing ռազմավարությունը, որի էությունը համայնքների եւ դրանց ինստիտուտների հետ ոստիկանության գործընկերային հարաբերությունների ձեւավորումն ու զարգացումն է, «հարեւանային վերահսկողության» կազմակերպումը: Այս նպատակներին հասնելու համար ոստիկանությունը կարգախոս է ընտրում բնակչությանը որակյալ ծառայություններ մատուցելը. ոստիկանությունը ծառայում է բնակչությանը՝ ապահովելով յուրաքանչյուր հարկատուի անվտանգությունը: Ոստիկանության գործունեությունը կարգավորող ցանկացած օրենսդրությունում նախեւառաջ ամրագրված է, որ ոստիկանության հիմնական գործառույթը բնակչության անվտանգության ապահովումն է, երկրի յուրաքանչյուր բնակչի հանցավոր ոտնձգությունից պաշտպանելը: Ոստիկանություն-հասարակություն փոխհարաբերությունները բարձր մակարդակի վրա կառուցելու համար արեւմտյան տեսաբաններն առաջարկում են հետեւյալ բանաձեւը. խստացնել ոստիկանությունում ծառայության անցնողների ընտրության համար առաջադրվող պայմանները, բարեփոխել ոստիկանության համար կադրեր ապահովող ուսումնական հաստատությունները, դրանք համապատասխանեցնել արդի պահանջներին, ոստիկանության յուրաքանչյուր ծառայողի մեջ ամրապնդել այն սկզբունքը, որ ոստիկանի գերնպատակը հասարակության յուրաքանչյուր անդամի՝ օրինապահ քաղաքացու, հարկատուի անվտանգության երաշխավորը լինելն է, ոստիկանի սոցիալական ապահովվածությունը բարձրացնելը, խստացնել պատասխանատվությունը իրավապահների կողմից թույլ տրված անօրինականությունների համար, անհանդուրժողական վերաբերմունք դրսեւորել կաշառք վերցնելու եւ քննության անօրինական մեթոդներ կիրառելու փաստերի հանդեպ: Ինչ խոսք, վերը նշված խնդիրները լուծելու համար կարեւոր է նաեւ ոստիկանությունը ժամանակակից համապատասխան տեխնիկական միջոցներով ապահովելու հարցը:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում աշխարհում հանցավորությունը աճել է գրեթե չորս անգամ. ԱՄՆ-ում եւ ԱՊՀ տարածքում՝ 8 անգամ, Շվեդիայում եւ Մեծ Բրիտանիայում՝ 7, Ֆրանսիայում՝ 6, Գերմանիայում՝ 4 անգամ: ՄԱԿ-ի տվյալներով՝ անցած դարի 90-ականների վերջին հանցավորության տարեկան աճը 5% էր, այնինչ բնակչության աճը նույն ժամանակահատվածում չէր գերազանցել 1%-ը:

Ամեն տարի աշխարհում պաշտոնապես արձանագրվում է մոտ 450 միլիոն հանցագործություն. իրականում դրանց քանակը շատ ավելի մեծ է: Նման իրավիճակում հանցավորության դեմ պայքարի նշանակությունը, որպես իրավական, սոցիալական եւ քաղաքական արժեք, անհնար է թերագնահատել:

**Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ**

# Չվարձալի ամփոփագիր

## «Ղեկին կին է» շարքից

Սեւանի թերակղզու հարավային ափի ջրային հատվածում 44-ամյա մի կին, վարելով «Բոմբորդեր» մակնիշի մոտորանավակը՝ բախվել է ափամերձ հատվածում կայանված նավին, ինչի հետեւանքով ինքն էլ ստացել է մարմնական վնասվածքներ ու տեղափոխվել հիվանդանոց:

ժամանակ, 22-ամյա երկու ուկրաինուհիներ ձեռքերով խփել են իրեն՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Շատ ադեքվատ տղամարդը հրաժարվել է դատաբժշկական փորձաքննությունից:

## Անհիմն մեղադրանք

Ոստիկանություն է զանգել 33-ամյա մի կին եւ հայտնել, որ ազգականը հյուրասենյակի սեղանի վրայից գողացել է 210 հազար դրամ: Ժամեր անց կինը կրկին զանգել է բաժին եւ հայտնել, որ փողը գտնվել է:



Պարզվել է, որ գիշերը սեղանի վրայից փողը վերցրել է կնոջ 9-ամյա որդին եւ պահել իր դպրոցական պայուսակում:

## Կանացի զենքեր

Ոստիկանությունում 40-ամյա մի կին հաղորդում է տվել, որ 70-ամյա սկեսուրը, կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում, ափսեով եւ կաթսայի կափարիչով խփել է իր գլխին՝ պատճառելով վնասվածքներ:

## Ոչ ադեքվատ մարդիկ

Գիշերվա ժամը 03.50-ին ոստիկանություն է զանգել երեսնամյա մի տղամարդ եւ հայտնել, որ երկու կին հարձակվել են իր վրա, ճանկռել դեմքը: Ամփոփելով ահազանգը՝ տղամարդը հավելել է թե՝ «ոչ ադեքվատ մարդիկ են»:

Շտապ մեկնել է օպերատիվ խումբը: Տղամարդը հաղորդում է տվել, որ անցած գիշերը, ժամը հինգին, իսկ այս գիշեր՝ երեքն անց կեսին, տանը, վիճաբանության

## Բախտը չբերեց

Ոստիկանություն զանգած 48-ամյա կինը հայտնել է, որ գնացել է գյուղ՝ բախտ նայողի մոտ, 10 հազար դրամ վճարել, որից հետո բախտագուշակը եւս 60 հազար դրամ է ուզել: Պայծառատեսը գուշակել էր, որ տունդարձի ճանապարհին կինը պետք է վթարի ենթարկվի, 60 հազարն էլ այն ազնիվ նպատակի համար էր, որպեսզի կանխի պատահարը: Կինը, սակայն, իրեն խաբված է զգացել եւ փողը հետ է ուզել, բայց հիմա էլ միջամտել է բախտագուշակի աղջիկը: Նա ասել է, թե դանակը կմտցնի փորը:

Մեկնած ոստիկաններն անփորձանք հասել են դեպքի վայր եւ արձանագրել, որ բախտագուշակը խաբեությամբ կնոջից հափշտակել է 66 հազար դրամ:

Առայժմ բոլորն էլ ողջ են:

## Մեղավորը միշտ տաքսիստն է

Ոստիկանություն զանգած 43-ամյա կինը հայտնում էր, որ ծանոթը ճանապարհին իրեն ծեծել է եւ խլել բջջային հեռախոսը:

Պարզվել է, որ նախորդ օրը, երեկոյան, անհայտ տաքսու սրահում նախկին ամուսինն է ծեծել կնոջը եւ վերցրել հեռախոսը:

Ձեռնարկվում են միջոցառումներ տաքսու վարորդին եւ կնոջ նախկին ամուսնուն հայտնաբերելու ուղղությամբ:

## www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 37 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու, 3-ը՝ ծեծի, 1-ը՝ ծեծի եւ կողոպուտի, 1-ը՝ մարդուն առեւանգելու փորձի, 1-ը՝ ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելու, 3-ը՝ գողության, 1-ը՝ գողության եւ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելու կամ վնասելու, 1-ը՝ գողության փորձի, 1-ը՝ գողության փորձի եւ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ հափշտակելու կամ վնասելու փորձի, 7-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության եւ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու, 2-ը՝ դասալքության, 1-ը՝ անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ այլ եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 5 հետախուզվող:

Արձանագրվել է 111 ճանապարհատրանսպորտային պատահար. 6 մարդ զոհվել է, 158-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ: Արձանագրվել է վրաերթի 24 դեպք. 1 մարդ զոհվել է, 23-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Հանրապետության ճանապարհներին

Սեպտեմբերի 27-ին Երեւան-Իջեւան ճանապարհի 58-րդ կմ-ին «Ռենո Մեգան» մակնիշի ավտոմեքենան բախվել է կայանված «Լեքսուս LX-570» մակնիշի ավտոմեքենայի. «Ռենո Մեգան»-ի 62-ամյա վարորդը եւ ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, իսկ 64-ամյա ուղեւորը տեղում մահացել է:

■

Սեպտեմբերի 27-ին Գյումրիի Տիգրան Մեծի փողոցում «Ֆոլքսվագեն Գոլֆ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 54-ամյա քաղաքացու, որը տեղում մահացել է: Վրաերթից հետո «Ֆոլքսվագեն Գոլֆ»-ը բախվել է «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի: Վարորդը մեքենան թողնելով դեպքի վայրում՝ դիմել է փախուստի, սակայն ոստիկանների բացատրական աշխատանքի շնորհիվ հաջորդ օրը ներկայացել է ոստիկանության Կումայրիի բաժին:

■

Սեպտեմբերի 28-ին Վայոց ձորի մարզի Աղավնաձոր գյուղում «ՈւԱԶ» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել դաշտամիջյան ճանապարհի երթեւեկելի գոտուց եւ գլորվել ձորը. 52-ամյա վարորդը տեղում մահացել է, իսկ 51-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 28-ին Սեւան-Երեւան ճանապարհի 15-րդ կմ-ին «ՎԱԶ-217030» մակնիշի ավտոմեքենան բախվել է ճամփեզրին կայանված «ԴԱՖ» բեռնատարին. «ՎԱԶ-217030»-ի 26-ամյա վարորդը տեղում մահացել է:

■

Սեպտեմբերի 29-ին Արմավիր-Գյումրի ճանապարհի 27-րդ կմ-ին «ԿԱՎԶ-3270» ավտոբուսը բախվել է ճանապարհին կայանված «ԿԱՄԱԶ-55111» բեռնատարի հետնամասին կցորդված հրանոթին. «ԿԱՎԶ-3270»-ի 61-ամյա վարորդը տեղում մահացել է, իսկ 15 ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 29-ին Երեւանի Գր. Լուսավորչի փողոցում իրար են բախվել «ԲՄՎ», «Ռենո», «Մերսեդես», կայանված երկու «ԲՄՎ» եւ «Սիտրոեն» մակնիշի ավտոմեքենաներ. «Մերսեդես»-ի 31-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 29-ին Երեւանի Խորենացու-Զաքիյան փողոցների խաչմերուկում «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 35-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 30-ին Այնթապ-Նուբարաշեն ճանապարհի 5-րդ կմ-ին «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենան բախվել է ճամփեզրի բետոնե արգելապատնեշին եւ հայտնվել փոսի մեջ. 29-ամյա վարորդը տեղում մահացել է:

■

Սեպտեմբերի 30-ին «ԲՄՎ-525» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Մասիս քաղաքի 7-րդ փողոցում վրաերթի է ենթարկել 10-ամյա աղջկա, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 30-ին Արմավիրի մարզի Գեղակերտ գյուղում իրար են բախվել «Նիսան Տիդա» եւ «Տոյոտա Քեմրի» մակնիշի ավտոմեքենաներ. «Տոյոտա Քեմրի»-ի 15-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 30-ին Վանաձոր-Ալավերդի ճանապարհի 14-րդ կմ-ին «Դեու» մակնիշի ավտոմեքենան բախվել է քարերին եւ ընկել ջրատարը. 75-ամյա վարորդը եւ երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 30-ին Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղում «ԳԱԶ-3110» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 6-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Սեպտեմբերի 30-ին Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոցում «Օպել» մակնիշի ավտոմեքենան բախվել է մայթեզրի ծառին. 50-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

# Ստալինի օրոք գնդակահարվու՞մ էին անչափահասները



Արդյո՞ք ստալինյան ՍՍՀՄ-ում կար անչափահասների գնդակահարություն: Այս թեմայի շուրջ բանավեճն ավարտվեց դատական գործընթացով: Եվգենի Ջուղաշվիլին, որն իրեն համարում է Ստալինի թոռը, հայցով դիմեց դատարան՝ընդդեմ ռադիոկայանի: Ռադիոկայանն, ըստ Եվգենիի, վիրավորել էր պապի պատիվն ու արժանապատվությունը: Լրագրողը հաղորդման ընթացքում ասել էր, որ Ստալինը թույլատրել է անչափահասների գնդակահարությունը՝ սկսած 12 տարեկանից: Դատարանը չբավարարեց Եվգենի Ջուղաշվիլու հայցը, բայց հրապարակվեցին մի շարք արխիվային փաստաթղթեր: Եթե Եվգենին իմանար նման փաստաթղթերի գոյության մասին, դժվար թե հայցով դիմեր դատարան:

Ժամանակին ոչ բոլոր փաստաթղթերն են կրել «խիստ գաղտնի» գրությունը: Այսպես, Կենտրոնական գործադիր կոմիտեի (ԿԳԿ) եւ Ժողովրդական կոմիսարների խորհրդի (ԺԿԽ) 1935 թվականի ապրիլի 7-ի որոշման վերաբերյալ «Անչափահասների հանցավորության դեմ պայքարի միջոցները» վերտառությամբ հոդված լույս տեսավ «Իզվեստիա»-ում: Որոշման առաջին կետով սահմանվում էր, որ անչափահասները, սկսած տասներկու տարեկանից, եթե գողություն, կողոպուտ, սպանություն կամ սպանության փորձ կկատարեն, մարմնական վնասվածք կհասցնեն՝ կենթարկվեն քրեական պատասխանատվության, անգամ նրանց նկատմամբ կկիրառվի բարձրագույն պատիժ՝ գնդակահարությունն:

ԿԳԿ-ի եւ ԺԿԽ-ի այս որոշմամբ՝ավտոմատ վերացվում էր «ԽՍՀՄ եւ Դաշնային Հանրապետությունների քրեական օրենսդրության հիմնարար սկզբունքներ»-ի 8-րդ հոդվածը, որում ասվում էր, որ անչափահասների նկատմամբ պետք է կիրառվեն բժշկահոգեբանական միջոցներ, իսկ մեկ այլ կետով սահմանվում էր, որ հանրապետությունների օրենսդրությունը պետք է համապատասխանեցնել սույն որոշման հետ: Այսինքն՝պետք էր հեռացնել բոլոր այն դրույթները, որոնք խոչընդոտում էին մահապատժի կիրառումը անչափահասների նկատմամբ:

Չնայած այս որոշման հեղինակ են համարվում ԿԳԿ-ն եւ ԺԿԽ-ն՝ սակայն իրական հեղինակը Ստալինն է՝«ժողովուրդների հայրը»: Արխիվում պահպանվել են փաստաթղթերի սեւագրություններ, որոնց վրա ուղղումները, լրացումներն ու փոփոխությունները Ստալինի ձեռագրով են:

Խորհրդային օրենքը չափազանց բարդ եւ խճճված կառուցվածք ուներ, հաճախ՝ հակասական, երբեմն՝ «հակամարտող» նորմատիվ կանոնակարգեր: Շատ իրավաբանների դիտարկումների համաձայն՝ խորհրդային օրենսդրությունը նման է ժողովրդական այն խոսքին, որ օրենքը նման է աղեղի՝ ինչպես ծռես՝ կծռվի: Այն, առաջնորդի ցանկությամբ, կարող էին ծռել ցանկացած ուղղությամբ: Եվ, ընդհանրապես, Քրեական օրենսգրքով չէր որոշվում այս կամ այն հանցանքի համար նախատեսված պատիժը կամ դիտվում որպես միակ փաստաթուղթ: Կարեւորը ԿԳԿ-ի եւ ԺԽԿ-ի որոշումներն էին: Հասկանալի է, թե դրանց հետեւում ով էր կանգնած:

Հետաքրքիրն այն է, որ սովետական արդարադատությունն ուսումնասիրողները միաձայն պնդում են, որ կարիք չկար օրենքները փոփոխության ենթարկել եւ անմարդկային հոդվածներով փչացնել օրենսդրական դաշտը: Չէ՞ որ կարեւորագույնները կարգավորվում էին առաջնորդի հրամաններով: Օրինակ, եթե ինչ-որ հանցագործության համար քրեական օրենսգրքով նախատեսված էր ոչ ավելի, քան հինգ տարվա ազատազրկում, գոնե առավելագույնը՝ տասը տարվա ազատազրկում, ապա հատուկ որոշմամբ՝արդեն գնդակահարություն:

Օրինակները շատ են: Այսպես, «սոցիալիստական սեփականության» գողության համար պատիժ էր սահմանված տասը տարվա ազատազրկումը, իսկ ԿԳԿ-ի եւ ԺԽԿ-ի որոշմամբ՝ միայն գնդակահարություն: Այդ որոշումը մինչեւ խրուշչովյան ժամանակները մնացել էր անփոփոխ:

Հարց է առաջանում՝իսկ ի՞նչ նորմերով էին առաջնորդվում կատարողները: Բնականաբար, ինչպես որոշումն էր կայացվում, այնպես էլ իրականացնում էին: Նորմերը կամ օրենքները թղթի վրա մնալու համար էին: Իսկական օրենքները առաջնորդի հրամաններից ծնվածներն էին: Ասենք՝ քրեական օրենսգիրքն արգելում էր անչափահասի գնդակահարությունը, բայց առաջնորդի ցուցումով ԿԳԿ-ն եւ ԺԽԿ-ն որոշումներ էին ընդունում, որ հանցագործություն կատարած անչափահասին կարող են կանգնեցնել պատի տակ եւ գնդակահարել: Խճճվա՞ծ է: Գուցե: Բայց այն տարիներին, չափահաս թե անչափահաս, տարբերություն չկար. հանցանք գործած անձը դատապարտվում էր մահապատժի: Բարդ է, բայց շատ հարմար էր իրացնելու բարձրագույն ղեկավարության քաղաքական կամքը:

Նման որոշումներն ու հրամանները բավական շատ էին, եւ, բնական է, որ հակասություններ էին առաջանում օրենքների եւ այդ որոշումների ու հրամանների մեջ: Արդարադատություն իրականացնողների համար անհասկանալի դրություն էր ստեղծվել: Հաճախ մեծ խնդրի առաջ էին կանգնում՝ ի՞նչ անել հանցագործություն կատարած անձին: Չէ՞ որ մի դեպքում գնդակահարել էին, իսկ մյուսով՝ պատիժ սահմանել, իսկ երրորդի դեպքում դեմ էին առնում անորոշության: Գնդակահարությո՞ւն, թե՞ պատիժ: Չէ՞ որ բացառված չէր, որ սխալ որոշման դեպքում արդարադատություն իրականացնողները հայտնվեին պատժվողի դերում:

Սա գիտակցելով՝ 1935 թվականին ՍՍՀՄ գլխավոր դատախազ Անդրեյ Վիշինսկին եւ Գերագույն դատարանի նախագահ Ալեքսանդր Վինոկուրովը ստորագրեցին մի փաստաթուղթ, որով որոշակիանում էին ԿԳԿ-ի եւ ԺԽԿ-ի որոշումները: Այդ փաստաթուղթը կրում էր «1/001537- 30/002517 գաղտնի գրություն» դրոշմը:

«Գաղտնի» գրությամբ թղթապանակում եղած նյութերը վերաբերում էին անչափահասների նկատմամբ բարձրագույն պատժի նշանակմանը: Հանրապետության դատախազներին, դատավորներին արգելվում էր մինչեւ 18 տարին լրացած անձանց նկատմամբ սահմանել մահապատիժ: Խստորեն ցուցում էր տրված, որ եթե անչափահասին պետք է մեղադրանք առաջադրվեր այն հոդվածներով, որոնք գնդակահարություն են նախատեսում, ապա մեղադրանք առաջադրելուց առաջ հարկավոր էր այդ մասին տեղյակ պահել գլխավոր դատախազին կամ Գերագույն դատարանի նախագահին: Նման գործերի նկատմամբ առավել խիստ հսկողություն էր սահմանվում: Այսինքն՝ իրականում ոչինչ չէր փոխվել, ուղղակի այդ փոփոխությունը այսպես կարելի է ներկայացնել՝ գնդակահարում եք՝ գնդակահարեք, միայն թե տեղյակ պահեք: Գլխավոր դատախազին եւ դատավորին տեղյակ պահելուց հետո ոչ մի անչափահաս չի փրկվել գնդակահարությունից:

Անգամ այսքանից հետո անչափահասներին գնդակահարելու կամ չգնդակահարելու հարցը կրկին քննարկման է դրվել քաղբյուրոյի նիստի ժամանակ: Բայց՝ շոշափելի ոչ մի առաջընթաց: Միեւնույն է, Ստալինի կարծիքն անփոփոխ էր. հանցագործի տարիքը բացարձակ կապ չունի մեղադրանք առաջադրելու հետ: Գնդակահարությունը մնում էր ուժի մեջ: Բայց իրավիճակին տեղյակ անձինք կփաստեն, որ քաղբյուրոյի մեկ այլ որոշմամբ՝18 տարին չլրացած անձանց նկատմամբ մահապատիժ չէր կարող կիրառվել: Անհասկանալի ոչինչ չկա, պարզապես այդ ամենը Ստալինի պահանջն է:

Պատմաբաններին եւ իրավաբաններին հետաքրքրում է՝ արդյո՞ք ստալինյան տարիներին անչափահասներին գնդակահարել են: Համաձայն արխիվային փաստաթղթերի՝ այո՛, գնդակահարություններ տեղի են ունեցել: Իհարկե, ոչ այն մասշտաբով, ինչպես չափահաս անձանցը: Բուտովսկու կրակադաշտում գնդակահարված 20 761 անձանցից երկու հարյուրը անչափահասներ են: Հաշվարկ կարող է անել նաեւ ընթերցողը. Քանի՛-քանի նման կրակադաշտեր կան: Որքա՛ն ընտանիքներ կային, որտեղ ծնողները գնդակահարվել էին: Իսկ կերակրող չունեցող անչափահասներին կարելի էր միլիոններով հաշվել: Այդ երեխաները իրենց հանապազօրյա հացը վաստակում էին, իհարկե, հանցագործությամբ: Հետո հայտնվում էին արդարադատության ձեռքում, իսկ սոցիալիստական սեփականության գողը ազգի թշնամի էր եւ արժանի գնդակահարության...

# Հանցանք եւ բռնություն

Փորձագետների տվյալներով՝ ամեն ժամ աշխարհում արձանագրվում է 200 հազար հանցագործություն: Ընդհանուր առմամբ, տարեկան արձանագրվում է 450 միլիոն հանցագործություն: Որոշ վերլուծաբաններ նշում են, որ իրականում այդ թվերն անհրաժեշտ է կրկնապատկել, քանի որ շատ հանցագործություններ այդպես էլ չեն գրանցվում եւ դուրս են մնում պաշտոնական վիճակագրությունից:



Միայն ԱՄՆ-ում ամեն տարի արձանագրվում է 30-40 միլիոն հանցագործություն, որից 5 միլիոնը՝ ծանր: Սպանությունների թվով Ռուսաստանն առաջատար է: Ռուսաստանում քսան անգամ ավելի շատ սպանություն է արձանագրվում, քան Ճապոնիայում, տասնյոթ անգամ շատ, քան Գերմանիայում, տասնչորս անգամ շատ, քան Ֆրանսիայում: Միեւնույն ժամանակ, Շվեդիայում քսան անգամ ավելի շատ հարձակումներ են արձանագրվում, քան Ռուսաստանում:

Միջազգային կազմակերպությունների տվյալներով՝ ամեն տարի աշխարհում ավելի քան մեկուկես միլիոն մարդ բռնի մահվան զոհ է դառնում, այլ կերպ ասած՝ ամեն տարի աշխարհի բնակչության արական սեռի՝ տասնչորս, եւ կանանց 7 տոկոսը բռնի մահվան է ենթարկվում:

Միլիոնավոր մարդիկ բռնությունների հետեւանքով մարմնական վնասվածքներ են ստանում եւ դառնում հաշմանդամ: Մեր ժամանակներում 15-44 տարեկան մարդկանց մահվան հիմնական պատճառներից մեկը բռնությունն է:

Փորձենք այս վիճակագրությունը մանրամասնել: Յուրաքանչյուր րոպե աշխարհում հարձակման հետեւանքով մարդ է զոհվում: Իսկ յուրաքանչյուր քառասուն վայրկյանի ընթացքում մեկ մարդ ինքնասպան է լինում:

Ամեն ժամ զինված կոնֆլիկտների հետեւանքով զոհվում է երեսունհինգից քառասուն մարդ: Անցած դարում պատերազմներին եւ զինված բախումներին, ընդհանուր առմամբ, զոհ է գնացել 191 միլիոն մարդ: Ընդ որում, պատերազմում յուրաքանչյուր զոհվածի բաժին է ընկնում քառասուն վիրավոր:

Վիճակագրության համաձայն՝ բռնի մահվան ենթարկված կանանց կեսից ավելին սպանվել են ամուսինների կամ սիրեկանների կողմից:

Որոշ երկրներում այս ցուցանիշը հասնում է 70 տոկոսի:

Աշխարհում չորս կանանցից մեկը ենթարկվել է սեռական բռնության՝ կողակցի կողմից: Բռնությունների հանդեպ անպաշտպան են նաեւ տարեցները. զարմանալի է, բայց փաստ, որ ծերերի 6 տոկոսը բռնության է ենթարկվում շրջապատի կողմից:

Առողջապահության միջազգային կազմակերպության ներկայացուցիչները կոչ են անում մարդկանց լուրջ վերաբերվել այս վիճակագրությանը, որը մարտահրավեր է մարդկանց: Ըստ փորձագետների, այս տվյալները կստիպեն մարդկանց փոխել իրենց վերաբերմունքը բռնությունների նկատմամբ:

Անցած տարիների վիճակագրությունը փաստում է՝ ամեն օր աշխարհում մահապատժի է ենթարկվում 5-7 մարդ: Այս տվյալների հեղինակը «Ամնեսթի ինթերնեյշընլ» ոչ կառավարական միջազգային կազմակերպությունն է:

Ընդհանուր առմամբ՝ տարեկան մահապատժի է ենթարկվում մոտ երկուսուկես հազար մարդ: Այս թվերի հետ կապված՝ մի հետաքրքիր դիտարկում. մահապատիժների 93 տոկոսն ի կատար է ածվում Իրանում, Չինաստանում, Սաուդյան Արաբիայում. Պակիստանում եւ ԱՄՆ-ում:

Մեր հարեւան երկրում եղել են դեպքեր, երբ մահապատժի են դատապարտվել նաեւ անչափահասներ:

Մահապատիժներն իրականացվել են ամենատարբեր մեթոդներով՝ գնդակահարություն, կախաղան, գլխատում, քարկոծում, էլեկտրական աթոռ, մահացու սրսկում:

Չնայած պետությունների 2/3-ում մահապատիժն օրենքի ուժով վերացել է, սակայն մեծ թվով երկրներում այն դեռ գործում է: Մահապատժի վերաբերյալ բերված թվերն էլ չի կարելի վերջնական ու ճշգրիտ համարել, քանի որ տարբեր երկրներում իրականացված մահապատիժների մասին տեղեկատվությունը հստակ չէ:

# Զենք-զինամթերքի հանձնում

Ոստիկանությունը շարունակում է բնակչության մոտ ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնմանն ու հայտնաբերմանն ուղղված միջոցառումները:



Հրազենային վնասվածքների, մահացու դեպքերի զգալի մասն ապօրինի պահվող զենք-զինամթերքի գործածության հետեւանքով են լինում: Ուստի այդ հանցագործությունների կանխարգելման տեսանկյունից առանձքային նշանակություն ունեն բնակչության մոտ ապօրինի պահվող զենք-զինամթերքի կամավոր հանձնմանն ու հայտնաբերմանն ուղղված միջոցառումները:

Սեպտեմբերի 25-ին ոստիկանության Վայքի բաժնի ծառայողների բացահայտական աշխատանքների շնորհիվ Եղեգնաձորի մի բնակիչ կամավոր հանձնել է «ԻԺ» տիպի որսորդական ողորկափող հրացան: Վայոց ձորի մարզում նույն օրը զենք-զինամթերք է հանձնել նաեւ մեկ այլ քաղաքացի:

Օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ոստիկանության Ջերմուկի բաժնի եւ ՃՈ 2-րդ գումարտակի ծառայողների կողմից բնակչության շրջանում անցկացված բացահայտական աշխատանքների շնորհիվ Ջերմուկի բաժին է ներկայացել Կարմրաշեն գյուղի մի բնակիչ եւ հանձնել ինքնաշեն թմբուկավոր ատրճանակ, ինքնաձիգի փամփշտապունիեր եւ տարբեր տրամաչափի փամփուշտներ:

Սեպտեմբերի 26-ին ոստիկանության Եղեգնաձորի բաժնի ծառայողների բացահայտական աշխատանքների շնորհիվ Անդրանիկի փողոցի մի բնակիչ կամավոր հանձնել է ինքնաշեն ատրճանակ՝ պահեստապունիով, 3 ինքնաշեն նռնակ եւ տարբեր տրամաչափի փամփուշտներ:

Նույն օր քաղաքացիները կամավոր զենք-զինամթերք են հանձնել նաեւ Կոտայքի մարզում:

Ոստիկանության Բյուրեղավանի բաժանմունքի ծառայողների բացահայտական աշխատանքների շնորհիվ Բյուրեղավանի Կոտայքի փողոցի մի բնակիչ կամավոր հանձնել է նռնակ՝ պայթուցիչով եւ ինքնաձիգի փամփուշտներ:

Ոստիկանության Նաիրիի բաժնի ծառայողների անցկացրած բացահայտական աշխատանքների շնորհիվ բաժին է ներկայացել Եղվարդի մի բնակչուհի եւ հանձնել «Ֆ1» տեսակի նռնակ եւ որսորդական ողորկափող հրացան: Եվս մեկ որսորդական հրացան էլ, բայց արդեն «ԻԺ» տեսակի, ոստիկանների բացահայտական աշխատանքի շնորհիվ Վայոց ձորի մարզի մի բնակիչ է ոստիկանության Վայքի բաժին բերել:

Կրկին հիշեցնում ենք. քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ապօրինի զենք-զինամթերքը կամովին հանձնած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից:

Գոռ ՎԱՆՅԱՆ

# Կասկածյալը ոստիկանությունում



**Հունիսի 4-ին Աջափնյակ վարչական շրջանում բնակարանային գողություն էր կատարվել: Արզումանյան փողոցի շենքերից մեկում, օգտվելով դուռը բաց լինելու հանգամանքից, ինչ-որ մեկը բնակարանից հափշտակել էր ոսկյա զարդեր: Գողության մասին ոստիկանության Մաշտոցի բաժնում հաղորդում էր ստացվել: Դեպքի առթիվ Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում հարուցվել էր քրեական գործ:**

**Հետաքննություն իրականացնող մարմինը գողությունը կատարած անձին եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկեց: Առաջ քաշվեցին ու հերքվեցին տարբեր վարկածներ: Բացահայտման համար առանցքային նշանակություն ունեցան օպերատիվ ճանապարհով ձեռք բերված տվյալները, որոնք փաստում էին, որ գողություն կատարած անձը Ապարանի 37-ամյա մի բնակիչ է:**

**Սեպտեմբերի 24-ին, ստացված տեղեկությունները իրացնելով, քրեական հետախույզներն Արզումանյան փողոցից կասկածյալին բերման ենթարկեցին ոստիկանության Մաշտոցի բաժին:**

**Նա խոստովանել է կատարածը, նաեւ հավելել, որ փետրվարից մինչեւ սեպտեմբեր Աջափնյակ վարչական շրջանում կատարել է եւս տասը բնակարանային գողություն:**

**Գողության փաստով հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:**

# www.police.am

## Գրպանահատը 62-ամյա կին էր

Սեպտեմբերի 27-ին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնում հաղորդում է ստացվել, որ երթուղային միկրոավտոբուսում մի կնոջ պայուսակից գողացել են դրամապանակը, որի մեջ եղել է փող, բանալի, անցագրային եւ բանկային քարտեր:

Քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ գողությունը հնարավոր է կատարած լինի 62-ամյա մի կին, որը ներկայացել է ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին եւ տվել խոստովանական բացատրություն:

Նախապատրաստվում են նյութեր:

## Հարսին դանակահարել էր սկեսուրը

Սեպտեմբերի 27-ին ոստիկանության Շենգավիթի բաժնում հաղորդում էր ստացվել, որ Նոր Խարբերդի առանձնատներից մեկում 52-ամյա կինը դանակահարել է 25-ամյա մի աղջկա: Քիչ անց հիվանդանոցից հայտնել էին, որ «շտապօգնության» խումբը կրծքավանդակի ծակած-կտրած վերքով բուժօգնության է տեղափոխել 25-ամյա աղջկա:

Ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ աղջկան մարմնական վնասվածք պատճառած կինը նրա սկեսուրն է: Կինը դանակով խփել էր հարսին՝ կենցաղային հարցերի շուրջ վիճաբանության ժամանակ:

Ոստիկանության Շենգավիթի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ 52-ամյա կինը բերման է ենթարկվել ոստիկանություն եւ ձերբակալվել:

Կատարվում է նախաքննություն:

## Դանակահարություն Այնթապում

Սեպտեմբերի 21-ին ոստիկանության Մասիսի բաժնում ահազանգ էր ստացվել, որ Այնթապ գյուղից «Էրեբունի» բժշկական կենտրոն է տեղափոխվել դանակահարված 35-ամյա մի տղամարդ:

Ոստիկանության Արարատի մարզային վարչության եւ Մասիսի բաժնի քրեական հետախույզները համատեղ միջոցառումների արդյունքում պարզեցին, որ Այնթապ-Նուբարաշեն ճանապարհին մի քանի երիտասարդի մասնակցությամբ վեճ է տեղի ունեցել, որի ընթացքում էլ տղամարդը դանակահարվել է: Շուտով հայտնի դարձավ նաեւ հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձի ինքնությունը: Չարենցավանում ապրող 23-ամյա երիտասարդը, բացատրական աշխատանքի արդյունքում, ներկայացավ ոստիկանության Մասիսի բաժին:

Հարուցվել է քրեական գործ:

## Գողը օտարերկրացի էր

Սեպտեմբերի 20-ին ոստիկանության Կենտրոնական բաժին էր զանգել մի տղամարդ եւ հայտնել, որ մայրը վերադարձել է եւ տանը տեսել անծանոթ մարդու, որը նկատելով մորը՝ փախել էր՝ հետը տանելով 60 հազար դրամ:

Ոստիկանության Մարաշի բաժանմունքի ծառայողների ձեռնարկած օպերատիվ միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ գողությունը կատարել է Ուզբեկստանի մի քաղաքացի:

Ոստիկանության Էրեբունու բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները, Մարաշի բաժանմունքի ծառայողների հետ համատեղ Երվանդ Քոչարի փողոցից 39-ամյա տղամարդուն բերման են ենթարկել Էրեբունու բաժին:

Կատարվում է նախաքննություն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Հասարակական կարգի եւ բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ

Խուլիգանությունը, ահաբեկչության մասին սուտ հաղորդում տալը, վանդալիզմը, պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը, պոռնկությամբ զբաղվելու համար որջեր կազմակերպելը, կավատությունը, պոռնկագրական նյութեր կամ առարկաներ տարածելը, պատմության եւ մշակույթի հուշարձաններ վնասելը կամ ոչնչացնելը, դիակը կամ թաղման վայրերը անարգանքի ենթարկելը. հասարակական կարգի եւ բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ են:

Հասարակական կարգն ընկալվում է երկու իմաստով` լայն եւ նեղ: Լայն իմաստով` հասարակական կարգը հասարակության մեջ առկա սոցիալական կապերի եւ հարաբերությունների համակցությունն է, որը ձեւավորվում է սոցիալական, իրավական եւ բարոյական նորմերի համակցության արդյունքում, եւ յուրաքանչյուր հանցագործություն, զանցանք կամ իրավախախտում այս կամ այն չափով հանգեցնում է դրա խախտմանը:

Նեղ իմաստով` հասարակական կարգն ընկալվում է որպես հասարակական նշանակության վայրերում` ուսումնական հաստատություններում, հասարակական տրանսպորտում, փողոցում, տրանսպորտային միջոցների կայանատեղիներում, օդանավակայաններում, շուկաներում, պուրակներում, այգիներում, կինոթատրոններում, ցուցասրահներում, մարզադաշտերում, հիմնարկ-ձեռնարկություններում, հասարակական սննդի վայրերում եւ հասարակական նշանակության այլ վայրերում այնպիսի իրադրության առկայություն, որի պայմաններում ապահովված է քաղաքացիների արժանավայել վարքագիծը, հասա-



րակական նշանակության օբյեկտների բնականոն աշխատանքը, նաեւ այդ վայրերում գտնվող անձի կամ անձանց հոգեկան ու ֆիզիկական անձեռնմխելիությունը: Հասարակական կարգի եւ բարոյականության դեմ ուղղված հանցագործությունները հիմնականում կատարվում են վերը նշված հասարակական նշանակության վայրերում: Առանձին-առանձին ու հանգամանալից խոսել բոլորի մասին, ժամանակային առումով, դժվար թե կարողանանք: Անդրադառնանք դրանցից առավել հաճախ հանդիպողին` խուլիգանությանը:

Խուլիգանությունը նոր հանցագործություն չէ: Երբ ձեւավորվել են հասարակական հարաբերություններ, ձեւավորվել են նաեւ այդ հարաբերությունները կարգավորող իրավական ու բարոյական նորմեր: Բնական է, եղել են մարդիկ, որոնք անտեսել են այդ բարոյական ու իրավական չափանիշները:

Շատ դեպքերում խուլիգանական գործողություններն արտաքնապես նման են այլ հանցագործությունների ընթացքում կատարվող այնպիսի գործողությունների, ինչպիսիք են` գույքի ոչնչացումը կամ վնասումը, անձի նկատմամբ վիրավորանքը, սպառնալիքը եւ այլն, բայց ամենաէական գործոնը, որը նաեւ հանցակազմի առկայության կարեւոր նախապայմանն է, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքն է:

Թեեւ խուլիգանության դեպքերի մեծամասնությունը կատարվում է հասարակական վայրերում, չի բացառվում, որ խուլիգանությունը կարող է կատարվել նաեւ հասարակական նշանակություն չունեցող վայրերում, որոնց հասարակական լինելը որոշվում է այնտեղ գտնվող մարդկանց ներկայությամբ: Եթե խուլիգնությունը զուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ գործադրելու սպառնալիքով, ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով, անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով, բացառիկ ցինիզմով, ապա խուլիգանի նկատմամբ իրավական առումով մոտեցումներն այլ են: Թվարկվածներից բացի, այս հանցարարքի ծանրացուցիչ այլ հանգամանքներ եւս կան, որոնց դեռ առիթ կունենանք անդրադառնալու:

Հասարակության մեջ ապրելը հաճույք է, առավել հաճելի է ապրել բարեկիրթ ու բարոյական հասարակությունում: Մոլորակի վրա դժվար թե գտնվի մի քաղաքակիրթ երկիր, որտեղ հասարակական կարգն ու բարոյականությունը պաշտպանված չեն օրենքով: Երջանիկ է այն հասարակությունը, որի անդամը չի առերեսվում այդ օրենքի հետ: Փորձենք լինել այդպիսին:

# Հայտնաբերվել են հետախուզվողներ




Սեպտեմբերի 27-ին ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախույզները Դուբայ-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո գծային բաժին բերման են ենթարկել Հնդկաստանի Հանրապետության 44-ամյա մի քաղաքացու, որը Ղրղզստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից հետախուզվում էր խոշոր չափերով խարդախություն կատարելու մեղադրանքով:

◆

Սեպտեմբերի 27-ին ոստիկանության Սյունիքի մարզային վարչության եւ Կապանի բաժնի ծառայողները, օպերատիվ տվյալներն իրացնելով, Կապան քաղաքի Մինասյան փողոցում հայտնաբերել եւ բերման են ենթարկել Չորք թաղամասի 28-ամյա մի բնակչի, որը ՌԴ ՆԳՆ կողմից հետախուզվում էր մարմնական վնասվածք պատճառելու մեղադրանքով:

◆

Սեպտեմբերի 27-ին ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզները, Թալինի բաժնի ծառայողների հետ համատեղ, Նուբարաշենի 12-րդ փողոցի մի բնակարանից բերման են ենթարկել նույն փողոցի 23-ամյա մի բնակչի, որը հետախուզվում էր գողության փորձ կատարելու մեղադրանքով:

◆

Սեպտեմբերի 27-ին Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել Վրաստանի Հանրապետության 42-ամյա մի քաղաքացի, որը 2013 թվականից հետախուզվում էր ՌԴ ՆԳՆ Սվերդլովսկի մարզի Եկատերինբուրգ քաղաքի իրավապահների կողմից` ՌԴ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածի` գողության մեղադրանքով:

◆

Ոստիկանության Իջեւանի բաժնի քրեական հետախույզները սեպտեմբերի 27-ին Բագրատաշենի սահմանային անցակետից բերման են ենթարկել 42-ամյա մի տղամարդու, որը 1996 թվականից ոստիկանության Վաղարշապատի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի` անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելու մեղադրանքով:

◆

Ոստիկանության Կենտրոնական բաժնի ՔՀԲ ծառայողների անցկացրած բացատրական աշխատանքների շնորհիվ սեպտեմբերի 28-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանից ոստիկանության Կենտրոնական բաժին է ներկայացել 29-ամյա Նաիրի Ն.-ն, որը 2018 թ. դեկտեմբերից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Կոտայքի բաժնի եւ Աբովյանի քննչական բաժնի ծառայողների համատեղ ձեռնարկած միջոցառումների շնորհիվ սեպտեմբերի 28-ին Աբովյանի քննչական բաժնից ոստիկանության Կոտայքի բաժին բերման է ենթարկվել 31-ամյա Կարեն Շ.-ն, որը ոստիկանության Մաշտոցի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

# Բացահայտում են Աշտարակի ոստիկանները



Սեպտեմբերի 17-ին ոստիկանության Աշտարակի բաժնի քրեական հետախույզները օպերատիվ տվյալներ էին ստացել, որ Աղձք գյուղի 27-ամյա մի բնակիչ գողություններ է անում: Ձեռք բերված տեղեկությունների իսկությունը ստուգելուց հետո կասկածվողը նույն օրը բերման ենթարկվեց ոստիկանության Աշտարակի բաժին, որտեղ էլ խոստովանեց կատարածը: Ըստ նրա` մարտից մինչեւ օգոստոս ամիսը, վարձով բնակարան փնտրելու պատրվակով, մտել էր Աշտարակի տարբեր բնակարաններ ու փող գողացել:

Մայիսին Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի փողոցի բնակարաններից մեկի միջանցքում կախված հագուստի գրպանից մի քանի հազար դրամ էր հափշտակել, մարտ ամսին նույն փողոցի մեկ այլ բնակարանի հյուրասենյակից` դարձյալ փող: Օգոստոսին, օգտվելով Աշտարակի Ալեք Մանուկյան փողոցի բնակարաններից մեկի դուռը բաց լինելու հանգամանքից, մտել էր տուն, պայուսակից գողացել տանտիրուհու դրամապանակը: Օրեր անց նույն փողոցի մեկ այլ շենքում, դարձյալ վարձով բնակարան փնտրելու պատրվակով, տուն էր մտել ու միջանցքից հափշտակել տանտիրոջ դրամապանակը:

Գողության փաստով հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

# Գողություններ Գյումրիում



**Հունիսի 15-ի գիշերը ոստիկանության Գյումրի քաղաքի Մուշի բաժնում բնակարանային գողության վերաբերյալ հաղորդում ստացվեց: Չկողպված դռնով մտել էին Չարենցի փողոցի տներից մեկն ու ոսկյա թեւնոց գողացել: Հուլիսին գողության վերաբերյալ եւս մեկ ահազանգ հնչեց: Այս անգամ դեպքի վայրը Խորենացու փողոցում էր. շինանյութի խանութից հափշտակել էին 1 միլիոն 400 հազար դրամի ապրանք: Օգոստոսի 20-ին դարձյալ Չարենցի փողոցում բնակարան էր թալանվել: Տիրոջը պատճառվել էր 300 հազար դրամի վնաս:**

**Բնակարանից, խանութից, գեղեցկության սրահից կատարված գողությունների վերաբերյալ ոստիկանության Մուշի բաժնում ահազանգեր հնչեցին նաեւ սեպտեմբերին: Միայն մի դեպքով հափշտակել էին ընդհանուր 1 միլիոն 400 հազար դրամի էլեկտրական գործիքներ: Բաժնի բոլոր ստորաբաժանումների ծառայողները, քրեական հետախույզների ղեկավարմամբ, համալիր օպերատիվ միջոցառումներ էին ձեռնարկել դեռեւս ամռանը կատարված գողությունները բացահայտելու ուղղությամբ: Հետեւողական աշխատանքը սեպտեմբերի 24-ին արդյունք տվեց: Հայտնաբերվեցին ու բերման ենթարկվեցին գյումրեցի 18 եւ 19-ամյա երկու երիտասարդ, որոնք խոստովանեցին կատարածը: Հետագա միջոցառումներով ոստիկանները հայտնաբերեցին նաեւ գողացված ապրանքների մի մասը:**

**Հարուցվել է քրեական գործ: Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ու քննչական գործողությունները շարունակվում են:**

# Թմրանյութեր գեղատան անօրենի մոտ



Օրերս անդրադարձել էինք Երեւանի մի քանի դեղափներում կափարված խուզարկություններին, որոնց արդյունքում հայփնաբերվել էր 843 հափ հոգեներգործուն դեղահաբ:

Ղարուցված քրեական գործի շրջանակներում ոսփիկանության ԿՂԴՊ գլխավոր վարչության ծառայողները շարունակեցին օպերափիվ-հեփախուզական միջոցառումները` համագործակցելով Քնանաքեռ-Զեյթունի բաժնի եւ նախաքննական մարմնի աշխափակիցների հեփ: Ոսփիկանության ծառայողները, դափարանի որոշմամբ, խուզարկություն կափարեցին դեղափներից մեկի փնօրենի բնակարանում: Ղայփնաբերվեց 35 գրամից ավելի դեղնականաչավուն կանեփանման զանգված եւ գորշ հեփքերով կաթուցիչներ, որոնք ուղարկվեցին փորձաքննության:

Կափարվում է նախաքննություն:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Էվերեստ / Հնդկաց. ժողովուրդ; Լադ / Պարիս; Շախ, մատ / Եզ; Ռուս նավագնաց; Ջինվ. կոչում / Տղամարդ

Վրաստանի դրամ; Ամերիկ. երգահան / Քթոց; Ջրալի ճաշ

Պետական մարմին / Գլխարկի տեսակ

Շեքսպիր, հերոս / Ծառի մաս; Նահանգ, ԱՄՆ; Աֆրիկյան երկիր / Դեմքի մաս; Երկրի երեսից անհետացած ցուլ

Իրավաբ. մարմին / Հաղթանակների ամիս; Գլխավոր ոստիկան, ԱՄՆ / Արեւածագ; ... Նիկոլսոն / Շախմ. աշխ. չեմպիոնուհի; Ամերիկյան ավտոմեք. / Ժորժ ...; Ընդեղեն / Մասիս

Վրիժառության աստվածուհին; Բադի տեսակ; Քաղաք, Միջագետք / Մատղաշ

... Սիրաս; Կովկասյան հին ցեղ / Քսենոփոն; «Լոռեցի ...ն» / Կանաչեղեն; Հույն պատմագիր / Էլբրուս; Սակավ / Ձուկ

Մարտ, օգոստոս; Բեկված ճառագայթների հատման կետ

Բախտի ... / Անհոսք աղի լիճ (Ղազախ.); Ուկրաին. հետման; Ինքնաթիռ; Ծառ / Վրաց ազգային խաղ / Ամոն

Մախաթ / Թութակ; Խորհրդ. հայագետ / Բայ, շաղկապ; Վիշապ / Ճապոնիայի ամենամեծ լիճը; Սարսափ; Բույր / Հույն քանդակագործ

Կեռաս / Դրամ; Նոտագրական նշան / Փոցխ; Մարիա ... / Ժամանակի միավոր

Բայրոն, պոեմ / ... ժիժկա; Ձեռքի մատ / Բռնակալ; Դեդալոսի որդին; «... Լիզա»; ... Սարգսյան

Աշակերտի պիտույք / Կարատեի կարգ; «... Աթենացի» / Խաղողի թունդ գինի; ... Մկրտչյան; Որոմ / Շնասահնակ

Մահմեդ. հոգեւոր պետ; Իտալական քաղաք- նավահանգ.; Մենդելեեւ / Քիմիական տարր; Ուժի միավոր

Ջոհ մատուցվող կենդ. / Փոքր նավ; Կերակրի ... / Ս. Տեր-Պետրոսյան



Նվագարան, Հին Հայաստան; Պլյուս / Գզրոց / Երգչ. ձայն; ... Օղեան / Հս. Կորեայի դրամ

Ժիլբեր ...; Վերջ

... ու աղեղ / Ըմպելիք; Ֆրանս. կինոդերասանուհի; Բուհի սովորող

Տափակ քար; Ռուս կնոջ զգեստ

# Ուշադրություն

## Հարգելի քաղաքացինե՛ր



ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

# Աստղագուշակ



04.10 - 10.10

**Խոյ -** Փորձեք իրադարձությունների զարգացման տարբերակներ դիտարկել: Ամեն ինչ այնպես չէ, ինչպես ենթադրում էիք:

**Ցուլ -** Կարեւոր հաղթանակների համար պետք է պայքարել, բայց դուք դրան պատրաստ չեք: Կարեւոր է հասկանալ, թե ինչի վրա պետք է ծախսել ձեր ուժերը:

**Երկվորյակ -** Շաբաթը լարված է, բայց չի կարելի անհուսալի վատը համարել: Պետք է հաղթահարեք փորձությունները:

**Խեցգետին -** Աշխատասիրությունն ու համառությունը կօգնի ձեզ հաջողության հասնել այնտեղ, որտեղ մյուսները հանձնվել են:

**Առյուծ -** Երբեմն անհանգստանում եք մանրուքներից, բայց իրականում դասավորվում են բարդ իրավիճակներ:

**Կույս -** Ձեզ բարենպաստ շաբաթ է սպասում: Կարելի է իրականացնել վաղուց մտածածը:

**Կշեռք -** Փորձությունները հաջորդում են իրար, չեք կարող հանգստանալ, քանի որ հասկանում եք, որ շուտով նոր խոչընդոտներ ի հայտ կգան:

**Կարիճ -** Շատ հարցեր աչքաթող չեք անում եւ փորձում եք ամեն ինչ հսկողության տակ պահել:

**Աղեղնավոր -** Երբեմն կբողոքեք հոգնածությունից, բայց հոգու խորքում կուրախանաք,որ պետք եք շրջապատին:

**Այծեղջյուր -** Հիմա կարեւոր է խուսափել ծանրաբեռնվածությունից, հնարավորության դեպքում հրաժարվել վնասակար սովորություններից:

**Ջրհոս -** Պետք է ուշադիր լինեն նրանք, ովքեր այցելություն են նախատեսում պետական կազմակերպություններ:

**Ձուկ -** Մի հետաձգեք կարեւոր գործերը: Հիմա կարելի է ազդեցիկ մարդկանց աջակցությունը ստանալ:

# Փորձեք լուծել

**Խնդիր N1**



**Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից**

**Խնդիր N2**



**Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից**

**Նախորդ խնդիրների պատասխանները**

1.f4-g5 b8:f4 2.g5:c5x1.c3-e1 a5:e5 2.e1:a5x

Խնդիր N2 1.d6-c7 d8:b6 2.e5-f6 g3:g7 3.h6:a7x

Պատրաստեց
**Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ**
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

# Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աբաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 03.10.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: